**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2**

**«ՀՀ ԷԲՊՆ-ԲԸԱՀԾՁԲ-15-19» ծածկագրով ԲԸԱՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 18.12.2015թ.

ժամը՝ 11:00

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝** աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ Էդ. Շախկյանը

**Անդամներ՝** աշխատակազմի արտաքին կապերի վարչության արարողակարգի բաժնի առաջատար մասնագետ՝ Հ. Աբրահամյանը

աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Բաբուջյանը

աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ն. Հակոբյանը

աշխատակազմի քարտուղարության առաջատար մասնագետ՝ Ա. Ջուլհակյան

**Հանձնաժողովի քարտուղար՝** աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ. Ադոնց:

1. **Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

**«ՀՀ ԷԲՊՆ-ԲԸԱՀԾՁԲ-15-19»** ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության շենքում, ք. Երևան, կառավարական տուն, մասն.2 հասցեում, 2-րդ հարկ N 211 սենյակում, 2015 թվականի դեկտեմբերի 18-ին ժամը 11:00-ին:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և գտնվելու վայրերի հասցեները.**

| N/N | Մասնակցի անվանումը | Կազմակերպության հասցեն |
|---|---|---|
| 1 | «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ | Ք.Երևան,Վարդանանց 4<br>info@armeniatravel.am |
| 2 | «Տրինիդատ» ՍՊԸ | Ք.Երևան, Զաքյան 6/36<br>trinidattour@gmail.com |

3. **Տվյալներ՝ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.**

3.1 «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3.2 «Տրինիդատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

4. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

4.1 «ՀՀ ԷԲՊՆ-ԲԸԱՀԾՁԲ-15-19» ծածկագրով մրցույթին հրավերով սահմանված «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ-ն փակ կնքված ծրարով ներկայացրել էր գնման ընթացակարգին մասնակցելու դիմում /հավելված 1/, որակավորման չափանիշների վերաբերյալ սույն հրավերով պահանջվող փաստաթղթերը /հավելվածներ 3.1,3.2, 3.3, 3.5 և 3.6/, գնի առաջարկ /հավելված 4/,հայտի ապահովում /հավելված 9/ և վճարման պահանջագիր: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 1 օրինակ պատճեններից և համապատասխանում են հրավերով սահմանված կարգի պահանջներին:

4.2 «ՀՀ ԷԲՊՆ-ԲԸԱՀԾՁԲ-15-19» ծածկագրով մրցույթին հրավերով սահմանված «Տրինիդատ» ՍՊԸ-ն փակ կնքված ծրարով ներկայացրել էր գնման ընթացակարգին մասնակցելու դիմում /հավելված 1/, որակավորման չափանիշների վերաբերյալ սույն հրավերով պահանջվող փաստաթղթերը /հավելվածներ 3.1,3.2, 3.3, 3.5 և 3.6/, գնի առաջարկ /հավելված 4/,հայտի ապահովում /հավելված 9/ և վճարման պահանջագիր: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 1 օրինակ պատճեններից և համապատասխանում են հրավերով սահմանված կարգի պահանջներին:

**5. Մասնակիցների առաջարկած գները.**

| Ծառայության անվանումը | Գնի առաջարկները | | |
|---|---|---|---|
| | (ՀՀ դրամ) | | |
| | «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ | | |
| | գինը | ԱԱՀ | գինը |
| Ավիասպասարկման ծառայություններ /չափաբաժին 1/ | 350000 | - | 350000 |
| | «Տրինիդատ» ՍՊԸ | | |
| Ավիասպասարկման ծառայություններ /չափաբաժին 2/ | 313000 | - | 313000 |

Նիստին ներկա էին «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ-ի և «Տրինիդատ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 74-րդ կետի գ) ենթակետը՝ նիստին ներկա մասնակցներիի հետ վարված բանակցությունների արդյունքում «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ–ի կողմից ավիատոմսի գումարը նվազեցվեց 295000 դրամ:

Նիստի ընթացքում հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին «ՀՀ ԷԲՊՆ-ԲԸԱՀԾՁԲ-15-19» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների հայտերը և գնահատելով դրանք որոշվեց՝

1. Նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ 1-ին տեղ հաղթող մասնակից ճանաչել «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ-ին:
2. Պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ-ին:
3. Անգործության ժամկետ չի սահմանվում, համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի է) կետի:

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները**

**Հանձնաժողովի նախագահ՝** աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ Էդ. Շախկյան

**Անդամներ՝**

Աշխատակազմի արտաքին կապերի վարչության արարողակարգի բաժնի առաջատար մասնագետ՝ Է. Աբրահամյան

աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Բաբուջյան

աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ն. Հակոբյան

աշխատակազմի քարտուղարության առաջատար մասնագետ՝ Ա. Ջուլհակյան

**Հանձնաժողովի քարտուղար**՝ գնումների գործի համակարգող՝ Լ. Ադոնց